

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-14

### ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«21» հունվարի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն-ը, ի դեմս կենտրոնի տնօրեն Բարդուխ Գաբրիելյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), «Սևան-Հրազդան հիդրոէկոհամակարգի և հարակից տարածքների ցամաքային ֆաունայի և հիդրոբիոտների արդի վիճակի ուսումնասիրություն կլիմայի փոփոխման պայմաններում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

#### 1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված 137609.0 (մեկ հարյուր երեսունյոթ միլիոն վեց հարյուր ինը հազար) ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, այդ թվում՝ նպատակը, օրացուցային պլանը, այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

## **2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

### **2.1 ՀՀ ԳԱԱ –ն իրավունք ունի՝**

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

### **2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

### **2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝**

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

## 2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ-ին,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոնների համապատասխան:

### **3 Ծրագրի ֆինանսավորման չափը**

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 137609.0 (մեկ հարյուր երեսունյոթ միլիոն վեց հարյուր ինը հազար) ՀՀ դրամ:

### **4 Սոնիթորինգ**

**4.1** ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

**4.2** Սոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ն կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

**4.3** Սոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

**4.4** Սոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

### **5 Վճարման կարգը և ժամկետները**

**5.1** ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

**5.2** ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

## **6 Կողմերի պատասխանատվությունը**

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

## **7 Պայմանագրի գործողության ժամկետը**

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## **8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **9 Եզրափակիչ դրույթներ**

**9.1** Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:





9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:  
Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն  
է Գազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես  
ևսև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի  
Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները


ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի  
նախագահություն  
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24  
ՀՀ ՖՆ գանձապետական բաժանմունք  
ՀՀ 900011024115  
ՀՎՀՀ 00005673

ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և  
հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն  
ք. Երևան, 0014, Պարույր Մևակի, 7  
Թիվ 1 Գանձապետարան  
ՀՀ 900018005679  
ՀՎՀՀ 01008904

Նախագահ՝ Ռ.Սարգսիսյան

Տնօրեն՝ Բ.Գարրիելյան



  
(ստորագրություն)



  
(ստորագրություն)



Հավելված 1  
« 21 » 01 2020 թ.  
N Կ-14 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

«Մևան-Հրազդան հիդրոէկոհամակարգի և հարակից տարածքների ցամաքային ֆաունայի և հիդրոբիոնոտների արդի վիճակի ուսումնասիրություն կլիմայի փոփոխման պայմաններում» ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Բարդուխ Կառլենի Գաբրիելյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել

« 21 » 01 2020 թ. N Կ-14 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 137609.0 (մեկ հարյուր երեսունյոթ միլիոն վեց հարյուր ինը հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի  
նախագահություն  
ք. Երևան, Մարշալ Բաղդասյան պող., 24  
ՀՀ ՖՆ գանձապետական բաժանմունք  
ՀՀ 900011024115  
ՀՎՀՀ 00005673

ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և  
հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն  
ք. Երևան, 0014, Պարույր Սևակի, 7  
Թիվ 1 Գանձապետարան  
ՀՀ 900018005679  
ՀՎՀՀ 01008904

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

Տնօրեն՝ Բ. Գաբրիելյան



## ԱՌԱՋԱՂԻՄՆՔ

«Սևան-Հրազդան հիդրոէկոհամակարգի և հարակից տարածքների ցամաքային ֆաունայի և հիդրոբիոտոնների արդի վիճակի ուսումնասիրություն կլիմայի փոփոխման պայմաններում» ծրագրի

1. **Աշխատանքի կատարման հիմքը՝** Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:

2. **Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):**

Սևան-Հրազդան հիդրոէկոհամակարգը, որը միաժամանակ բավարարում է հանրապետության կենցաղային, գյուղատնտեսական, արդյունաբերական և էներգետիկ ոլորտի պահանջները, կարևոր նշանակություն ունի Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Այն ձգվում է Հայաստանի հյուսիսից մինչև հարավ, անցնում է հանրապետության չորս մարզերով և ընդգրկում է բոլոր լանդշաֆտային գոտիները՝ ալպիականից մինչև կիսաանապատային: Սևան-Հրազդան հիդրոէկոհամակարգն իր մեջ ներառում է ինչպես գետային (Հրազդան գետն իր Մարմարիկ վտակով), այնպես էլ լճային (Սևանա լիճ) և ջրամբարային (Ախպարայի և Երևանյան լիճ ջրամբարներ) էկոհամակարգեր: Հանրապետության ջրային պաշարների պահպանման, արդյունավետ օգտագործման և վերականգնման տեսակետից Սևան-Հրազդան հիդրոէկոհամակարգի կանոնավոր հետազոտությունների անհրաժեշտությունը կասկած չի հարուցում: Արդիականությամբ կասկած չեն հարուցում նաև հանրապետության բնաշխարհի պահպանման և հարուստ կենսառեսուրսների արդյունավետ օգտագործման խնդիրները, մարդու առողջությանը, գյուղատնտեսական կենդանիներին և բույսերին վտանգ ներկայացնող տեսակների վնասի կանխումն ապահովելու պահանջները: Ներկայացվող ծրագիրն ուղղված է վերոհիշյալ հարցերի ուսումնասիրությանը: Ներկայացվող «Սևան-Հրազդան հիդրոէկոհամակարգի և հարակից տարածքների ցամաքային ֆաունայի և հիդրոբիոտոնների արդի վիճակի ուսումնասիրություն կլիմայի փոփոխման պայմաններում» թեմայի նպատակն է վերլուծել և գնահատել Սևան-Հրազդան հիդրոէկոհամակարգի, ինչպես նաև հարակից տարածքների ցամաքային ֆաունայի արդի վիճակը կլիմայի փոփոխման պայմաններում և կանխատեսել դրանց զարգացման միտումները:

### 3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Կենտրոնը հիմնականում ապահովված է բարձրորակ մասնագետներով, սարքավորումներով, համակարգչային ժամանակակից ծրագրերով և տրանսպորտային միջոցներով: Սակայն նախագծի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ է նաև.

- նոր, ավելի ժամանակակից սարքավորումներ (մանրադիտակներ, տեսախցիկներ, սառնարաններ և այլն), կաբինետային կահույք, ինչպես նաև համակարգիչներ
- փորձարարական կենդանիներ, ռեակտիվներ, այլ նյութեր և պարագաներ
- գիտարշավների համար նպատակային ֆինանսական հատկացումներ: Ներկայում բոլոր գիտարշավներն ու դաշտային հետազոտությունները կազմակերպվում են այլ ծախսերի գումարների, միջազգային և այլ ծրագրերի հաշվին:
- երիտասարդ կադրերի պատրաստում և կենտրոնի հաստիքային կազմում նրանց հետագա ներգրավման հավաստի հնարավորություն: Անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ հաստիքներ երիտասարդ մասնագետների համար:
- գիտնականների միջազգային գիտաժողովներում մասնակցության, վերապատրաստման և առաջատար արտասահմանյան կենտրոններում համատեղ աշխատանքի հնարավորություններ, որի համար պահանջվում են գործուղման համապատասխան հատկացումներ:
- Ֆինանսական միջոցներ կապիտալ նորոգման, գիտական կոլեկցիոն նյութերի և թանգարանի պահպանման, ՀԳՓԿ-ի և Սևանի միջազգային գիտական բազայի ենթակառուցվածքի և հետագա գործունեությունն ապահովելու համար:

Գիտարշավների իրականացման համար կօգտագործվեն կենտրոնի տրամադրության տակ գտնվող տրանսպորտային միջոցները: Ուսումնասիրությունների ընթացքում կդրսևորվի էկոհամակարգային մոտեցում: Կկիրառվեն կենդանաբանական, միջատաբանական, էկոլոգիական, մակաբուծաբանական, էկոլոգիական, էթոլոգիական, ջրակենսաբանության և ձկնաբանության բնագավառներում ընդունված գիտական մեթոդներ՝ ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից (կարիոլոգիական, բջջագենետիկական, մոլեկուլային-կենսաբանական և այլն) մեթոդներ և մոտեցումներ:

Հետազոտությունների արդյունավետությունը կապահովվի գիտարշավների արդյունքում փորձանյութի կանոնավոր հավաքով, հավաստի տվյալների ձեռք բերման և դրանց համակողմանի վերլուծության շնորհիվ:

Ստացված արդյունքները կամփոփվեն տարեկան հաշվետվություններում և կներկայացվեն հրապարակումների տեսքով:

#### 4. Աշխատանքի բովանդակությունը

2020թ. նախատեսվում է հետազոտել Հրազդան գետը Երևան քաղաքի սահմաններից դուրս մինչ Արաքս գետը թափվելը:

Թեմայի կատարման ընթացքում կիրառվելու են ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից (կարիոլոգիական, մոլեկուլային-կենսաբանական և այլն) կենդանաբանական, մակաբուծաբանական, ֆիզիոլոգիական, էթոլոգիական, էկոլոգիական, ջրաբանական (հիդրոքիմիական, հիդրոֆիզիկական), սանիտարա-ջրակենսաբանական մեթոդներ:

Կատարված հետազոտությունների հիման վրա կիրականացվի արդյունքների վերլուծություն և կտրվի Հրազդան գետի էկոլոգիական վիճակի ամփոփ բնութագիրը:

Ծրագիրը բաղկացած է 2 ենթաթեմաներից.

**Ենթաթեմա 1. «Սևան-Հրազդան հիդրոէկոհամակարգի և հարակից տարածքների ֆաունայի արդի վիճակի ուսումնասիրություն կլիմայի փոփոխման պայմաններում»**

**(ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ-ի Կենդանաբանության ինստիտուտ)**

Ուսումնասիրվելու են անողնաշար կենդանիների ֆաունան՝ փափկամարմիններ (Mollusca), տզեր (Acarina) միջատների (Insecta) խոշոր կարգաբանական խմբեր՝ կարծրաթևեր

(Coleoptera), երկթևեր (Diptera), թփուկաթևեր (Lepidoptera՝ Rhopalocera և Heterocera) և այլ, ողնաշարավորների (երկկենցաղներ, սողուններ, թռչուններ, կաթնասուններ) ժամանակակից ֆաունան և սուբֆոսիլ նյութերը, ինչպես նաև պարազիտոֆաունայի ներկայացուցիչներն ու սինանթրոպ տեսակները: Նախատեսվում է ուսումնասիրել.

- լանդշաֆտային բազմազանությունը և բաշխվածությունը,
- տեսակային բազմազանությունը,
- ձևաբանությանը և կարգաբանությանը վերաբերող հարցեր
- սուբֆոսիլ նյութերը՝ նոր պեղավայրերից գտնված ոսկրային մնացորդների տաքսոնոմիկ պատկանելիությունը, մորֆոմետրիկ առանձնահատկությունները, մորֆոլոգիական շեղումներն ու պարթոլոգիաները, աշխարհագրական և ժամանակային փոփոխականությունը
- կենսա-էկոլոգիական, պոպուլյացիոն, բջջագենետիկական առանձնահատկությունները,
- վարքի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները էքստրեմալ գործոնների ազդեցության ներքո
- հանրապետության ներկա պայմաններում բույսերի, վայրի և ընտանի կենդանիների (նախակենդանիներ, հելմինթներ, ֆիտոնեմատոդներ, տզեր) առավել մեծ վտանգ ներկայացնող որոշ մակաբույծ տեսակների կենսական ցիկլերը, շրջանառության ուղիները, տարածումը, բիոհելմինթների միջանկյան տերերը, շրջակա միջավայրի աղտոտվածությունը ինվազիոն տարրերով
- կենսացենոզների կառուցվածքային բաղադրիչները, դոմինանտ, կենսացենոզների բնականոն գործունեությունն ու կայունությունն ապահովող, ինչպես նաև խոցելի և վտանգված տարրերը,

ինչպես նաև գնահատել

- էկոհամակերգերում տեղի ունեցած որակական և քանակական փոփոխությունները, բացահայտել
- կենսացենոզների էկոլոգիական վիճակը պայմանավորող, կառուցվածքային և տարածական փոփոխություններ առաջ բերող առավել կարևոր գործոններ
- բնական և մարդածին (այդ թվում և կլիմայի) ազդեցությունների հետևանքով էկոհամակարգերում տեղի ունեցող փոփոխությունների համար կենսացուցիչ հանդիսացող կոմպոնենտները
- բարձր արդյունավետությամբ օժտված բիոագենտներ՝ էկոլոգիապես անվտանգ կենսաբանական պայքարում օգտագործելու նպատակով:

**Ենթաթեմա 2. «Սևան-Հրազդան հիդրոէկոհամակարգի հիդրոբիոտների ուսումնասիրություն կլիմայի փոփոխման պայմաններում» (ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ-ի Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ)**

Հրազդանը, որպես անդրսահմանային Արաքս գետի խոշորագույն վտակ, զգալի ազդեցություն ունի վերջինիս ջրերի որակի ձևավորման վրա: Փորձագիտական վերլուծությունը ցույց է տվել, որ աղտոտիչների բարձր կոնցենտրացիաներ դիտվում են հատկապես Հրազդան գետի միջին և ստորին հոսանքներում: Հոսելով հանրապետության չորս մարզերով, Հրազդան գետը ենթարկվում է բազմաբնույթ ազդեցությունների:

Հրազդանի ջրակառավարման տարածքում աղտոտման հիմնական աղբյուրը կենցաղային հոսքաջրերն են: Հրազդան գետի ստորին հոսանքը ջրակառավարման տարածքի բնակավայրերով առավել հարուստ հատվածն է: Համաձայն ՀՀ ԲՆ ՋՌԿԳ Ջրային կադաստրի տվյալների և փորձագիտական գնահատման արդյունքների, 2018թ. հունվարի դրությամբ հեռացված կեղտաջրերի տարեկան ծավալն այստեղ կազմել է 1,301.8 մլն մ<sup>3</sup> (կենցաղային և արդյունաբերական կեղտաջրեր), 201.12 մլն.մ<sup>3</sup>-ը՝ կոյուղու համակարգերով մոտակա գետ (Հրազդան կամ Քասախ գետեր) թափված կենցաղային կեղտաջրերի ծավալն է: Կոյուղու կեղտաջրի ծավալը կազմել է ընդամենը 123.38 մլն մ<sup>3</sup> : Արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերի 90-95%-ը չի հավաքվել և չի մաքրվել: Հրազդանի ՋՏԿ-ում քաղաքային բնակավայրերի կենցաղային և արդյունաբերական կեղտաջրերն ուղղակիորեն հոսում են մակերևութային ջրերի մեջ և ներթափանցում են ստորերկրյա ջրային ռեսուրսներ՝ կեղտաջրերի մաքրման կայանների անբարվոք վիճակում գտնվելու կամ բացակայության պատճառով:

Ջրի որակի մոնիտորինգի 2015-2017թթ. տվյալների հիման վրա, կենսածին նյութերի կոնցենտրացիաները գետերի հոսքով դեպի ներքև (Հրազդան գետի՝ Երևան քաղաքից ներքև, Ծաղկաձոր գետի՝ Ծաղկաձոր քաղաքից ներքև) աճում են շուրջ 40-50 անգամ (ամոնիումի իոնի դեպքում՝ մինչև 300 անգամ): Արդյունքում, ՋԿՏ-ի հիմնական գետերի ստորին հոսանքներում նկատվում են էվտրոֆացման գործընթացներ, ինչը էկոհամակարգերի դեգրադացման պատճառ կարող է հանդիսանալ:

Գետն առավել հզոր ազդեցության ենթարկվում է Երևան քաղաքի տարածքում: Գետի վրա հատկապես զգալի է մայրաքաղաքի մաքրման կայանի կենտրոնացված

հոսքաջրերի ազդեցությունը: Ըստ ՀՀ ԲՆ ՋՌԿԳ տվյալների՝ արտադրական կեղտաջրերի ընդհանուր ծավալը (հիմնականում՝ սննդի արտադրությունից) Հրազդանի ջրակառավարման տարածքում կազմում է մոտ 1,1100.68 մլն մ<sup>3</sup>, որից 17.5 մլն մ<sup>3</sup>-ն ուղղվում է քաղաքային կոյուղու համակարգ և հետո լցվում է հարակից գետեր՝ հիմնականում՝ Հրազդան գետը: ԹԿՊ5-ի և ԹԲՊ-ի բարձր արժեքները վկայում են Հրազդան գետի՝ Երևան քաղաքից ներքև ընկած հատվածում ջրում օրգանական աղտոտիչների բարձր պարունակության մասին: Երևան քաղաքից մինչև Արաքս գետն ընկած հատվածում գետի էկոլոգիական վիճակի և ջրերի որակական փոփոխությունների հետազոտումը կարևոր են ոչ միայն հանրապետության սոցիալ-տնտեսական հարցերի լուծման համար, այլև միջազգային պարտավորությունների ստանձնման տեսակետից:

Հրազդան գետի ջրերն աղտոտվում են նաև ցրված աղբյուրներից՝ անասնապահությունից, լքված հանքերից, պոչամբարներից, ձկնաբուծարաններից և այլն: Գետի ստորին հոսանքի էկոլոգիական վիճակի գնահատման նպատակով դիտակետերը ընտրվել են հնարավոր ազդեցության աղբյուրների բաշխվածության հիման վրա: Առաջին դիտակետը գտնվում է անմիջապես Երևան քաղաքի «Աերացիա» մաքրման կայանի հարևանությամբ՝ Գեղանիստ գյուղի մոտակայքում: Նշված կայանը կատարում է հոսքաջրերի միայն մեխանիկական մաքրում, մինչդեռ կենտրոնացված ջրահեռացման համակարգի շնորհիվ այստեղ են կուտակվում քաղաքի ողջ հոսքաջրերը և անմիջականորեն, առանց քիմիական և կենսաբանական մաքրման լցվում են Հրազդան գետ:

Հաջորդ դիտակետը Դարբնիկ գյուղի տարածքում է: Այս դիտակետը համապատասխանում է Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիտորինգի կենտրոնի դիտակետին, որտեղ կատարվում են կանոնավոր հիդրոքիմիական հետազոտություններ, սակայն ջրակենսաբանական ցուցանիշներ չեն հետազոտվում: Ծրագրի շրջանակներում կատարված հետազոտությունները թույլ կտան համադրել հիդրոքիմիական և ջրակենսաբանական հետազոտությունների արդյունքները և բացահայտել կենսապայմանների ազդեցությունը կենսացենոզների բաղադրիչների ձևավորման վրա: Հաջորդ դիտակետը գտնվում է Միս գյուղի հարևանությամբ, իսկ վերջինը գտնվում է Հովտաշեն գյուղի մերձակայքում:

Հետազոտությունների ընթացքում կիրականացվեն.

- Հրազդան գետի օրգանական աղտոտվածությունը գնահատող հիդրոքիմիական (կենսաածին տարրերի պարունակություն, ԹԿՊ5, ՊՕ, Օ<sub>2</sub>, PH) և ջրաբանական այլ ցուցանիշների (ջրի ջերմաստիճան, հոսքի արագություն) հետազոտություններ:
- Կուտումնասիրվեն գետի ստորին հոսանքի կենսացենոզների կառուցվածքային բաղադրիչները:
- Կկատարվի ջրի որակի էկոլոգասանիտարական (ջրակենսաբանական և մանրէաբանական) գնահատում, սննդային փոխհարաբերությունների բացահայտում:
- Կբացահայտվեն.
- Գետի էկոլոգիական վիճակը պայմանավորող և կենսացենոզների կառուցվածքային փոփոխություններ առաջ բերող վճռորոշ գործոններ,

- Կլիմայի փոփոխման և անթրոպոգեն ազդեցության պայմաններում առավել խոցելի տարածքները,
- Ջրային ռեսուրսի աղտոտման նկատմամբ առավել զգայուն տեսակներ,
- Գետի ինքնամաքման գործում ջերմաստիճանային գործոնի դերը:

Տնօրեն (ռեկտոր)՝

  
(ստորագրություն)

Բ.Գաբրիելյան  
(անուն ազգանուն)

Օրագրի գիտական ղեկավար՝

  
(ստորագրություն)

Բ.Գաբրիելյան  
(անուն ազգանուն)



ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Սևան-Հրազդան հիդրոէլեկտրակարգի և հարակից տարածքների ցամաքային ֆաունայի և հիդրոբիոտոների արդի վիճակի ուսումնասիրություն և կլիմայի փոփոխման պայմաններում» ծրագրի

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	115264.4	23052.9	28816.1	28816.1	34579.3
2	տնտեսական և այլ ծախսեր*	22344.6	4468.9	5586.1	5586.1	6703.5
ԸՆԴԱՄԵՆԸ		137609	27521.8	34402.2	34402.2	41282.8

Գազմակերպության տնօրեն

  
 (ստորագրություն)

Բ. Գաբրիելյան  
 (անուն ազգանուն)

Գազմակերպության գլխավոր հաշվապահ՝

  
 (ստորագրություն)



\* Բուժերում իրականացվող ծրագրերի համար նախատեսված ծրագրի ֆինանսավորման անուվազն 3%-ը, այլու գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար - անուվազն 5%-ը



ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՄԵՐ՝

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	12149.1
	էլեկտրաէներգիայի ծառայություն	3860.1
	գազի ծառայություն	5811.0
	ջրամատակարարման ծառայություն	450.0
	կապի ծառայություն	1828.0
	աղբահանություն	200.0
2	Գույք	
3	Սարքեր և սարքավորումներ	2800.0
4	Նյութեր	5835.5
5	Գործուղումներ	
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	
7	Արշավախմբեր	1560.0
8	Հրատարակման ծախսեր	
9	Այլ	
Ընդամենը		22344.6

Կազմակերպության տնօրեն՝

  
 (ստորագրություն)

Բ. Գարրիեյան  
 (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

  
 (ստորագրություն)

Ա. Ակոբյան  
 (անուն ազգանուն)



\* Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
**«Սևան-Հրազդան հիդրոէկտրոհամակարգի և հարակից տարածքների ցամաքային ֆաունայի և հիդրոբիոտոնների արդի վիճակի ուսումնասիրություն կլիմայի փոփոխման պայմաններում»**  
ծրագրի

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը* (հազար դրամ)
1.	Գաբրիելյան Բարդուխ Կառլենի	կենտրոնի տնօրեն/ բաժնի վարիչ	կ.գ.դ.	240
2.	Մովսեսյան Սերյոժա Հովհաննեսի	գիտ.դեկավար/լաբ.վարիչ	կ.գ.դ., ակադեմիկոս	142.8
3.	Խաչատրյան Հասմիկ Գուրգենի	կենտ.գիտքարտ./գիտ.գծով փոխտնօրեն	կ.գ.թ.	192
4.	Ալեքսանյան Անուշ Սարգիսի	գլխավոր հաշվապահ		190
5.	Մինասյան Հեղինե Գուրգենի	կադրերի տեսուչ		130
6.	Արծրունյան Արմեն Ալբերթի	Փոխտնօրեն ընդհանուր հարցերով		148
7.	Թամազյան Անուշ Համլետի	կենտրոնի տնօրենի քարտուղար		98
8.	Հունանյան Գագիկ Աբասի	Պահակ/տնտեսավար		145
9.	Բաբայան Ջուլիետա Հմայակի	պահակ		90
10.	Ջավադյան Ժորա Ավագի	պահակ, կաթսայատան սեզ.օպերատոր/ 5 ամիս/		150
11.	Պետրոսյան Արմեն Մարատի	Գնումների մասնագետ		75
12.	Սարգսյան Լյուդմիլա Մենտորի	հավաքարար		90
13.	Պողոսյան Գայանե Հովհաննեսի	հավաքարար		92.618
14.	Նազինյան Գրիգորի Սարգսի	կաթսայատան սեզ.օպերատոր /5 ամիս/		90
15.	Երկանյան Սամվել Հրանտի	պահակ		90
16.	Ղալեյան Մարտիկ Հրաչիկի	կաթսայատան սեզ.օպերատոր /5 ամիս/		90
17.	Մկրտչյան Անահիտ Համլետի	գրադանավար		92.618
18.	Դիլբարյան Կիմ Պավելի	ԿԻ դեկավար, լաբ.վարիչ	Կ.գ.դ.	171
19.	Քալաշյան	լաբ.վարիչ	կ.գ.թ.	100

\* Աշխատավարձը՝ ներառյալ եկամտային հարկը, չպետք է ցածր լինի, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը

	Մարկ Յուրիի			
20.	Կարագյան Գայանե Հարությունի	ա.գ.ա	կ.գ.թ.	90
21.	Մարջանյան Մարգարիտ Ալեքսանդրի	ա.գ.ա./անողն.կենդ.կողմէկց. ֆոնդի պատասխանատու	կ.գ.թ.	90
22.	Միրումյան Լյուդմիլա Սյունիքի	ա.գ.ա/գիտքարտ պարտակ.	Կ.գ.թ.	90
23.	Հարությունյան Ռուզաննա Գեղամի	ա.գ.ա	կ.գ.թ.	30
24.	Հովհաննեսյան Վարուժան Ստեփանի	առաջատար գ.ա.	կ.գ.դ.	90
25.	Ավետիսյան Աիդա Ալեքսանդրի	կ.գ.ա.		52
26.	Հակոբյան Նորա Խաչատուրի	կ.գ.ա.		46
27.	Ղռեջյան Տիգրան Լևոնի	կ.գ.ա.		50
28.	Ղասաբյան Մամիկոն Գրիգորի	լաբոր.վարիչ	Կ.գ.թ.	100
29.	Մանասերյան Նինա Հուսիկի	առաջատար գ.ա.	Կ.գ.դ.	95
30.	Աղասյան Արամ Լևոնի	ա.գ.ա.	Կ.գ.թ.	30
31.	Բալյան Լյուբով Վալերիի	կ.գ.ա.		90
32.	Գյոնջյան Անդրանիկ Արայի	կ.գ.ա		92.618
33.	Հովհաննիսյան Ծովինար Սերգեյի	ավագ լաբորանտ		46
34.	Հարությունյան Լևոն Արթուրի	ավագ լաբորանտ		92.618
35.	Բագոյան Հասմիկ Վարդանի	կ.գ.ա.		92.618
36.	Աղասյան Լևոն Արամի	թանգարանի վարիչ	կ.գ.թ.	95
37.	Ղամբարյան Կատարինե Պավելի	ավագ լաբորանտ		90
38.	Հակոբյան Վարդգես Շատինի	տակսիդերմիստ		46
39.	Սինասյան Աիդա Հրանտի	Ավագ լաբորանտ		36.5
40.	Նիկողոսյան Մանյա Ահարոնի	ա.գ.ա.	կ.գ.թ.	113.5
41.	Պետրոսյան Ռոզա Անդրանիկի	ա.գ.ա.	կ.գ.թ.	93
42.	Հարությունովա Լատրա Զավադի	ա.գ.ա.	կ.գ.թ.	93
43.	Ռուխկյան Մարտին Յակովի	ա.գ.ա.	կ.գ.թ.	90
44.	Գևորգյան Հասմիկ Շավարշի	ա.գ.ա.	կ.գ.թ.	67
45.	Հովհաննիսյան Ռուզան Լևոնի	ա.գ.ա.	կ.գ.թ.	90
46.	Բարսեղյան	ավագ լաբորանտ		92.618

	Ռոզա Էդիկի			
47.	Աղայան Սարգիս Աղասու	Գիտ.խմբի ղեկավար, ա.գ.ա	կ.գ.թ.	40
48.	Դուդուկչյան Զարուհի Մանուկի	Ավագ լաբորանտ		92.618
49.	Աթոյան Հռիփսիմե Արմենի	լաբորանտ		30000
50.	Վարդանյան Մարինե Վազգենի	կ.գ.ա.	կ.գ.թ.	92.618
51.	Շչերբակով Օլեգ Վալերիի	գիտաշխատող	կ.գ.դ.	41
52.	Աբգարյան Տիգրան Արամի	Ավագ լաբորանտ		40
53.	Սարգսյան Հայկ Մելքոնի	Կ.գ.ա.	Կ.գ.թ.	30
54.	Մկրտչյան Հռիփսիկ Մերգոյի	ա.գ.ա.	կ.գ.թ.	90
55.	Հակոբյան Կարինե Վերդիի	ա.գ.ա.	կ.գ.թ.	90
56.	Գալստյան Սիլվա Խաչիկի	գիտաշխատող		90
57.	Ստեփանյան Իրոնա Էդուարդի	ա.գ.ա.	կ.գ.թ.	90
58.	Հակոբյան Անժելա Սուրենի	ա.գ.ա.	կ.գ.թ.	90
59.	Սուքիասյան Սամվել Վոյոդիայի	ՀԳՓԿ-ի վարիչ		160
60.	Մանասյան Երանուհի Սուրենի	հաշվապահ		90
61.	Սարգսյան Հայկ Գևորգի	անասնաբույժ		92.618
62.	Ենգիբարյան Սիմոն Ավանեսի	պահեստապետ		90
63.	Իսախանյան Գայանե Մայրի	ոչխարապահ		90
64.	Գրիգորյան Վարանցով Երեմի	պարետ		90
65.	Զատիկյան Մովսես Աղասիի	բանվոր		90
66.	Բաբայան Հովհաննես Գևորգի	պահակ		90
67.	Մուրադյան Գրիշա Աշոտի	մեխանիզատոր		90
68.	Ենգիբարյան Հայկուշ Սեմյոնի	լաբորանտ		45
69.	Սուքիասյան Ռիմա Մարիբեկի	ավագ տեխնիկ		90
70.	Ղուկասյան Էվելինա Խեչոյի	ՀեՁԻ-ի ղեկավար	կ.գ.թ.	190
71.	Առաքելյան Վահե Առաքելի	համակարգչ. օպերատոր		56
72.	Բարսեղյան Յուրա Հակոբի	ինժեներ		90
73.	Հակոբյան	նավի		90

	Վասակ Մաթևոսի	կապիտան		
74.	Մարգարյան Վազգեն Ալբերտի	նավի մեխանիկ		90
75.	Հակոբյան Մարտիկ Վասակի	լաբորանտ		92.618
76.	Ավետիսյան Սերգեյ Գրիգորի	պահակ		90
77.	Գուլանյան Գուրգեն	պահակ		92.618
78.	Մանուկյան Սուսաննա Գուրգենի	նավի պահակ		90
79.	Խաչատրյան Միշա Արշալույսի	վարորդ		95
80.	Վարդանյան Հերբերտ Սասունիկի	ա.գ.ա.	կ.գ.թ.	90
81.	Համբարյան Լուսինե Ռաֆիկի	հիդրոտեկոլոգ. բաժնի վարիչ	կ.գ.թ.	100
82.	Հակոբյան Սուսաննա Հակոբի	ջրակենսաբան.բաժնի վարիչ	կ.գ.թ.	100
83.	Բաղայան Նորիկ Սուրենի	ա.գ.ա.	կ.գ.թ.	90
84.	Եփրեմյան Հերմինե Վանիկի	ա.գ.ա.	կ.գ.թ.	90
85.	Դավլաբյան Մարինե Ռուսլանի	ա.գ.ա.	կ.գ.թ.	92.618
86.	Հովսեփյան Անահիտ Ալբերտի	գիտաշխատող	կ.գ.թ.	47
87.	Մկրտչյան Ժաննա Համլետի	կ.գ.ա./գիտքարտ.պարտ.		92.618
88.	Ստեփանյան Լիլիթ Գագիկի	ա.գ.ա.	կ.գ.թ.	92.618
89.	Հայրապետյան Արմինե Հովսեփի	ա.գ.ա.	կ.գ.թ.	92.618
90.	Եղիազարյան Աշոտ Կոլյայի	կ.գ.ա.		22
91.	Կոբեյան Հոփսիսիմե Հովհաննեսի	կ.գ.ա.		92.618
92.	Բաղայան Համեստ Սուրենի	ավագ լաբորանտ		90
93.	Մամյան Արմինե Սուրենի	գիտաշխատող	կ.գ.թ.	92.618
94.	Բարսեղյան Նելլի Էդիկի	ա.գ.ա.	կ.գ.թ.	92.618
95.	Վարդանյան Տիգրան Վաղինակի	ա.գ.ա.	կ.գ.թ.	92.618
96.	Ասատրյան Վարդան Լևոնի	ա.գ.ա.	կ.գ.թ.	92.618
97.	Մարգարյան Սուրիկ Ազատի	ա.գ.ա.	կ.գ.թ.	90
98.	Ճարատանյան Կիմա Սուրենի	ավագ լաբորանտ		92.618
99.	Գևորգյան Գոռ Արտակի	ա.գ.ա.	կ.գ.թ.	92.618

100.	Ղուկասյան Գոռ Խէչոյի	պահակ		90
101.	Խաչիկյան Թեհմինե Գագիկի	գիտաշխատող	կ.գ.թ.	92.618
102.	Մելքոնյան Հրանտշ Ֆելիքսի	ա.գ.ա.	տնտ.գ.թ.	92.618
103.	Մխիթարյան Անահիտ Ալբերտի	կ.գ.ա.		36.5
104.	Դաքեայան Արմեն	պահակ		90
105.	Բոշյան Տաթևիկ Վահանի	կ.գ.ա.		92.618
Ընդամենը՝				<b>115264.416</b>

Կազմակերպության տնօրեն՝

Կազմակերպության  
անձնակազմի կառավարման  
բաժնի պետ՝

Բ.Գաբրիելյան  
(տնօրագրություն)

Հ.Մինասյան  
(տնօրագրություն)



ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ \*

«Մևան-Հրազդան հիդրոէկտրակայանի և հարակից տարածքների ցամաքային ֆաունայի և հիդրոբիոտոների արդի վիճակի ուսումնասիրություն կլիմայի փոփոխման պայմաններում» ծրագրի

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	Անվանումը	համառոտ բովանդակություն	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1.	I. Գիտական հետազոտությունների իրականացում:	I. Աշխատանք գրականության հետ:  2. Լաբորատոր և դաշտային աշխատանքներ:  3. Փորձարարական աշխատանքների իրականացում:	Գրական նյութերի մշակում:  Դաշտային նյութի հավաք, նկարագրություն, դիտարկում և նախնական ֆիքսում: Կլիրառվեն դրված խնդիրներին համապատասխան ավանդական և ժամանակակից մեթոդներ. կենդանաբանական, միջատաբանական, մակաբուծաբանական, Ջրակենսաբանական, Մանրէաբանական,	Գրականության քարտադարանի առկայություն:  Առաջնանյութի առկայություն. -չոր նյութեր -թաց նյութեր -դաշտային մատյաններ -լուսանկարներ -փորձերի գրանցման մատյաններ:	2020թ. 1-ին եռամսյակ՝ 01.01.2020-31.03.2020թ.	<b>27521.8</b>

\* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով

		<p>4. Աշխատանք ինստիտուտի գիտական կոլեկցիոն նյութերի հետ -կոլեկցիոն նյութերի ուսումնասիրություն -կոլեկցիոն նյութերի պահպանությանն ուղղված աշխատանքներ :</p> <p>5. Հրապարակումների նախապատրաստում:</p>	<p>Ֆիզիոլոգիական, ցիտոգենետիկական, համակարգչային, վիճակագրական:</p> <p>Կոլեկցիոն նյութերի գիտական վերլուծություն՝ համաձայն դրված խնդիրների: Հավթածուների վնասագերծում՝ սպիրտի, ֆորմալինի, թունաքիմիկատների օգտագործմամբ և այլն: Հավաքված նյութերի հաշվին կոլեկցիաների լրամշակում:</p> <p>Ի մի կրերվեն և կամփոփվեն ստացված տվյալներն ու արդյունքները, կնախապատրաստվեն ու կներկայացվեն գիտական հրապարակումների տեսքով:</p>	<p>Կոլեկցիոն նյութերի առկայություն</p> <p>Հրապարակումների առկայություն</p>		
<p>II. Աշխատանքային պայմանների ստեղծում.</p>	<p>1. Աշխատավարձի տրամադրում:</p> <p>2. Գիտարշավների իրականացման ապահովում:</p>	<p>1. Աշխատանքային պայմանագրերի կնքում, հաստիքային ցուցակի հաստատում: Աշխատավարձի փոխանցում:</p> <p>2. Գիտարշավների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների</p>	<p>Աշխատանքային պայմանագրերի կնքում, հաստիքային ցուցակի հաստատում: Աշխատավարձի փոխանցում:</p> <p>Գիտարշավների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների</p>	<p>Համապատասխան պայմանագրերի, հրամանների, հաշվետվությունների, հաշվապահական փաստաթղթերի առկայություն: Ձեռք բերված գույքի և սարքավորումների առկայություն:</p>		



		<p>3. Աշխատանքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծում:</p> <p>4. Կոմունալ ծառայությունների ապահովում:</p>	<p>ձեռք բերում:</p> <p>Գրենական պիտույքների ձեռք բերում:</p> <p>Սարքերի և սարքավորումների, համակարգիչների, տպագրող և պատճենահանող սարքերի, դրանց համար պահեստամասերի և այլն.</p> <p>ձեռք բերում:</p> <p>Փորձերի և կոլեկցիոն նյութերի պահպանման համար անհրաժեշտ ռեակտիվների և այլ նյութերի ձեռքբերում:</p> <p>Փոխադրամիջոցների համար պահեստամասերի և վառելիանյութի (բենզին, խտացրած գազ) ձեռք բերում, տրանսպորտային միջոցների վերանորոգում:</p> <p>Գնումների գործընթացի կազմակերպում և իրականացում:</p> <p>Հոսանքի, ջրի, հեռախոսակապի, ինտերնետի առկայության և այլն. ապահովում:</p>			
--	--	---	--	--	--	--

2.	<p>I. Գիտաան հետազոտությունների իրականացում:</p>	<p>1. Աշխատանք գրականության հետ:</p> <p>2. Լաբորատոր և դաշտային աշխատանքներ:</p> <p>3. Փորձարարական աշխատանքների իրականացում:</p> <p>4. Աշխատանք ինստիտուտի գիտական կոլեկցիոն նյութերի հետ - կոլեկցիոն նյութերի ուսումնասիրություն - կոլեկցիոն նյութերի պահպանությանն ուղղված աշխատանքներ :</p> <p>5. Հրապարակումների</p>	<p>Գրական նյութերի մշակում:</p> <p>Դաշտային նյութի հավաք, նկարագրություն, դիտարկում և նախնական ֆիքսում: Կլիրառովեն դրված խնդիրներին համապատասխան ավանդական և ժամանակակից մեթոդներ. կենդանաբանական, միջատաբանական, մակաբուժաբանական, Ջրակենսաբանական, Մանրէաբանական, ֆիզիոլոգիական, ցիտոգենետիկական, համակարգչային, վիճակագրական:</p> <p>Կոլեկցիոն նյութերի գիտական վերլուծություն՝ համաձայն դրված խնդիրների: Հավթածուների վնասագերծում՝ սպիրտի, ֆորմալինի, թունաքիմիկատների օգտագործմամբ և այլն: Հավաքված նյութերի հաշվին կոլեկցիաների լրամշակում:</p> <p>Ի մի կերբվեն և կամփոփվեն</p>	<p>Գրականության քարտադարանի առկայություն:</p> <p>Առաջնանյութի առկայություն. -չոր նյութեր -թաց նյութեր -դաշտային մատյաններ -լուսանկարներ -փորձերի գրանցման մատյաններ:</p> <p>Կոլեկցիոն նյութերի առկայություն</p> <p>Հրապարակում</p>	<p>2020թ. 2-րդ եռամսյակ՝ 01.04.2020-30.06.2020թ.</p>	<p>34402.2</p>
----	--	---	--	--	--	----------------

		նախապատրաստում:	ստացված տվյալներն ու արդյունքները, կնախապատրաստվեն ու կներկայացվեն գիտական հրապարակումների տեսքով:	ների առկայություն		
II. Աշխատանքային պայմանների ստեղծում.	<p>1. Աշխատավարձի տրամադրում:</p> <p>2. Գիտարշավների իրականացման ապահովում:</p> <p>3. Աշխատանքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծում:</p>	<p>Աշխատավարձի փոխանցում:</p> <p>Գիտարշավների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների ձեռք բերում:</p> <p>Գրենական պիտույքների ձեռք բերում: Սարքերի և սարքավորումների, համակարգիչների, տպագրող և պատճենահանող սարքերի, դրանց համար պահեստամասերի և այլն. ձեռք բերում: Փորձերի և կոլեկցիոն նյութերի պահպանման համար անհրաժեշտ ռեակտիվների և այլ նյութերի ձեռքբերում: Փոխադրամիջոցների համար պահեստամասերի և վառելանյութի (բենզին, խտացրած գազ) ձեռք բերում, տրանսպորտային միջոցների</p>	<p>Համապատասխան պայմանագրերի, հրամանների, հաշվետվությունների, հաշվապահական փաստաթղթերի առկայություն: Ձեռք բերված գույքի և սարքավորումների առկայություն:</p>			

		4. Կոմունալ ծառայությունների ապահովում:	վերանորոգում: Գնումների գործընթացի կազմակերպում և իրականացում:  Հոսանքի, ջրի, հեռախոսակապի, ինտերնետի առկայության և այլն. ապահովում:			
3.	I. Գիտաան հետազոտությունների իրականացում:	1. Աշխատանք գրականության հետ:  2. Լաբորատոր և դաշտային աշխատանքներ:  3. Փորձարարական աշխատանքների իրականացում:  4. Աշխատանք ինստիտուտի գիտական կոլեկցիոն	Գրական նյութերի մշակում:  Դաշտային նյութի հավաք, նկարագրություն, դիտարկում և նախնական ֆիքսում: Կլիրառավեն դրված խնդիրներին համապատասխան ավանդական և ժամանակակից մեթոդներ. կենդանաբանական, միջատաբանական, մակաբուժաբանական, Ջրակենսաբանական, Մանրէաբանական, ֆիզիոլոգիական, ցիտոգենետիկական, համակարգչային, վիճակագրական:  Կոլեկցիոն նյութերի գիտական վերլուծություն՝ համաձայն դրված	Գրականության քարտադարանի առկայություն:  Առաջնանյութի առկայություն. -չոր նյութեր -թաց նյութեր -դաշտային մատյաններ -լուսանկարներ -փորձերի գրանցման մատյաններ:	2020թ. 3-րդ եռամսյակ՝ 01.07.2020- 30.09.2020թ.	<b>34402.2</b>

		<p>նյութերի հետ -կոլեկցիոն նյութերի ուսումնասիրություն -կոլեկցիոն նյութերի պահպանությանն ուղղված աշխատանքներ :</p> <p>5. Հրապարակումների նախապատրաստում:</p>	<p>խնդիրների: Հավթածուների վնասագրերում՝ սպիրտի, ֆորմալինի, թունաքիմիկատների օգտագործմամբ և այլն: Հավաքված նյութերի հաշվին կոլեկցիաների լրամշակում:</p> <p>Ի մի կերպվեն և կամփոփվեն ստացված տվյալներն ու արդյունքները, կնախապատրաստվեն ու կներկայացվեն գիտական հրապարակումների տեսքով:</p>	<p>Հրապարակում ների առկայություն</p>	
<p>II. Աշխատանքային պայմանների ստեղծում.</p>	<p>1. Աշխատավարձի տրամադրում:</p> <p>2. Գիտարշավների իրականացման ապահովում:</p> <p>3. Աշխատանքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծում:</p>	<p>Աշխատավարձի փոխանցում:</p> <p>Գիտարշավների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների ձեռք բերում:</p> <p>Գրենական պիտույքների ձեռք բերում: Սարքերի և սարքավորումների, համակարգիչների, տպագրող և պատճենահանող սարքերի, դրանց համար պահեստամասերի և այլն. ձեռք բերում: Փորձերի և կոլեկցիոն</p>	<p>Համապատասխան պայմանագրերի, հրամանների, հաշվետվությունների, հաշվապահական փաստաթղթերի առկայություն: Ձեռք բերված գույքի և սարքավորումների առկայություն:</p>		

			<p>նյութերի պահպանման համար անհրաժեշտ ռեակտիվների և այլ նյութերի ձեռքբերում:</p> <p>Փոխադրամիջոցների համար պահեստամասերի և վառելիանյութի (բենզին, խտացրած գազ) ձեռք բերում, տրանսպորտային միջոցների վերանորոգում:</p> <p>Գնումների գործընթացի կազմակերպում և իրականացում:</p>			
		4.Կոմունալ ծառայությունների ապահովում:	Հոսանքի, ջրի, հեռախոսակապի, ինտերնետի առկայության և այլն. ապահովում:			
4.	<p>I. Գիտաան հետազոտությունների իրականացում:</p>	<p>1. Աշխատանք գրականության հետ:</p> <p>2. Լաբորատոր և դաշտային աշխատանքներ:</p> <p>3. Փորձարարական աշխատանքների իրականացում:</p>	<p>Գրական նյութերի մշակում:</p> <p>Դաշտային նյութի հավաք, նկարագրություն, դիտարկում և նախնական ֆիքսում:</p> <p>Կլիբրավեն դրված խնդիրներին համապատասխան ավանդական և ժամանակակից մեթոդներ. կենդանաբանական, միջատաբանական, մակարուծաբանական, ջրակենսաբանական, մանրէաբանական,</p>	<p>Գրականության քարտադարանի առկայություն:</p> <p>Առաջնանյութի առկայություն.</p> <p>-չոր նյութեր-թաց նյութեր-դաշտային մատյաններ-լուսանկարներ-փորձերի գրանցման մատյաններ:</p>	2020թ. 4-րդ եռամսյակ՝ 01.10.2020-31.12.2020թ.	<b>41282.8</b>

		<p>4. Աշխատանք ինստիտուտի գիտական կոլեկցիոն նյութերի հետ -կոլեկցիոն նյութերի ուսումնասիրություն -կոլեկցիոն նյութերի պահպանությանն ուղղված աշխատանքներ :</p> <p>5. Հրապարակումների նախապատրաստում:</p> <p>6. Հաշվետվությունների նախապատրաստում:</p>	<p>Ֆիզիոլոգիական, ցիտոգենետիկական, համակարգչային, վիճակագրական:</p> <p>Կոլեկցիոն նյութերի գիտական վերլուծություն՝ համաձայն դրված խնդիրների: Հավթածուների վնասագերծում՝ սպիրտի, ֆորմալինի, թունաքիմիկատների օգտագործմամբ և այլն: Հավաքված նյութերի հաշվին կոլեկցիաների լրամշակում:</p> <p>Ի մի կբերվեն և կամփոփվեն ստացված տվյալներն ու արդյունքները, կնախապատրաստվեն ու կներկայացվեն գիտական հրապարակումների տեսքով:</p> <p>2016–2020թթ. ընթացքում գիտական արդյունքների վերլուծություն, ամփոփում,:</p>	<p>Կոլեկցիոն նյութերի առկայություն</p> <p>Հրապարակումների առկայություն</p> <p>Հաշվետվությունների առկայություն:</p>		
II. Աշխատանքային պայմանների ստեղծում.	<p>1. Աշխատավարձի տրամադրում:</p> <p>2. Գիտարշավների իրականացման ապահովում:</p>	<p>Աշխատավարձի փոխանցում:</p> <p>Գիտարշավների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և</p>	<p>Համապատասխան պայմանագրերի, հրամանների, հաշվետվությունների, հաշվապահական փաստաթղթերի</p>			

		<p>3. Աշխատանքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծում:</p>	<p>Ֆինանսական միջոցների ձեռք բերում:</p> <p>Գրենական պիտույքների ձեռք բերում:</p> <p>Սարքերի և սարքավորումների, համակարգիչների, տպագրող և պատճենահանող սարքերի, դրանց համար պահեստամասերի և այլն. ձեռք բերում:</p> <p>Փորձերի և կոլեկցիոն նյութերի պահպանման համար անհրաժեշտ ռեակտիվների և այլ նյութերի ձեռքբերում:</p> <p>Փոխադրամիջոցների համար պահեստամասերի և վառելանյութի (բենզին, խտացրած գազ) ձեռք բերում, տրանսպորտային միջոցների վերանորոգում:</p> <p>Գնումների գործընթացի կազմակերպում և իրականացում:</p>	<p>առկայություն:</p> <p>Ձեռք բերված գույքի և սարքավորումների առկայություն:</p>		
--	--	--	---	--	--	--



		4. Կոմունալ ծառայությունների ապահովում:	Հոսանքի, ջրի, հեռախոսակապի, ինտերնետի առկայության և այլն. ապահովում:			
Ընդամենը՝						137609

Կազմակերպության  
տնօրեն (ռեկտոր)՝

  
(ստորագրություն)

Բ. Գաբրիելյան

Ծրագրի գիտական ղեկավար՝

  
(ստորագրություն)



Բ. Գաբրիելյան